

GetTransfer ծառայության դիմաց կատարված վճարումների համար cashback-ի տրամադրման պայմաններ

1. Ընդհանուր դրույթներ.

- 1.1 Արշավի ժամանակահատված՝ «Այդի Բանկ» ՓԲԸ-ի կողմից 01.11.2023թ-ից 01.11.2024թ-ը ներառյալ իրականացվող արշավ:
- 1.2 Քարտ՝ «Այդի Բանկ» ՓԲԸ-ի կողմից թողարկված քարտեր:
- 1.3 Քարտատեր՝ «Այդի Բանկ» ՓԲԸ-ի կողմից թողարկված Քարտի քարտատեր:
- 1.4 Արշավին մասնակցելու դեպքում Քարտատերն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները:

2. Արշավի պայմաններ.

2.1 01.11.2023թ-ից 01.11.2024թ-ը ներառյալ www.gettransfer.com կայքում, ինչպես նաև համապատասխան բջջային հավելվածում կատարված վճարումների (այսուհետ՝ Վճարում) դիմաց Քարտատերերը կստանան cashback հետևյալ չափով.

- 5% cashback (Այսուհետ՝ Cashback) - Վճարումը հետևյալ քարտերով կատարելու դեպքում. [Mastercard Standard](#), [Mastercard Gold](#), [Visa Idram Rocket](#), [Visa Digital](#), [Visa Gold](#), այլ ստանդարտ դասի քարտեր:
- 9% cashback (Այսուհետ՝ Cashback) - Վճարումը հետևյալ քարտերով կատարելու դեպքում. [Visa Business](#), [Visa Business Platinum](#), [Visa Platinum](#), [Travel](#), [Visa Signature](#), [Visa Infinite](#), այլ բիզնես և պրեմիում դասի քարտեր:

Քարտի տրամադրման և սպասարկման այլ պայմանները սահմանվում են համապատասխան վճարային քարտի տեղեկատվական ամփոփագրով, որոնք հրապարակված են Բանկ կայքէջում հետևյալ [ղղմամբ](#):

2.2 Յուրաքանչյուր օրացույցային ամսվա ընթացքում կատարված Վճարումների համար Cashback-ը հաշվարկվում և վճարվում է հաջորդ ամսվա մինչև 5-րդ աշխատանքային օրը: Փաստացի ստացման ենթակա Cashback-ը Քարտատիրոջը փոխանցվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը գանձելուց հետո:

2.3 Բանկի կողմից կարող են սահմանվել Cashback-ի տրամադրման սահմանաչափի/պայմանների միակողմանի փոփոխություններ:

2.4 Քարտատերերի կողմից Արշավին մասնակցությունը կատարվում է ավտոմատ կերպով և վերջիններիս կողմից լրացուցիչ գործողություն չի պահանջվում:

2.5 Բանկն իրավունք ունի սույն պայմանների և դրույթների մեջ ցանկացած պահի կատարել միակողմանի փոփոխություն և կիրառել փոփոխությունն անմիջապես՝ Բանկի պաշտոնական կայքում հրապարակելուց հետո: